

Մարտի 19-ի դրությամբ┼

Մարտի 19-ի, ժամը 09:00-ի դրությամբ իրականացված կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) թեստավորման արդյունքում հաստատվել է ևս 5 դեպք: Բոլոր պացիենտների առողջական վիճակը բժիշկները գնահատում են բավարար:

Հանրագումարով՝ այս պահին արձանագրվել է 115 դեպք: Ունենք առողջացման 1 դեպք: Արդյունքների համաճարակաբանական վերլուծության տվյալները փաստում են, որ 99 դեպք փոխկապակցված է երկու առաջնակի դեպքերի հետ:

Մարտի 18-ի դրությամբ┼

Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդությունը (COVID-19) կանխելու նպատակով իրականացվում են կանխարգելիչ հակահամաճարակային միջոցառումներ՝ սկսած պետական սահմանի անցման կետից մինչ լաբորատոր հետազոտություններ: Մինչ օրս իրականացվել է 813 հետազոտություն, որից 84-ը՝ դրական արդյունքով, 1-ը՝ առողջացած: Արդյունքների համաճարակաբանական վերլուծության տվյալները փաստում են, որ 72 դեպք փոխկապակցված է երկու առաջնակի դեպքերի հետ:

Մարտի 17-ի դրությամբ┼

***

ԹԱՐՄԱՑՈՒՄ 21:30, 17.03.202

Վերջին տվյալներով ունենք Կորոնավիրուսային հիվանդության հաստատված ևս 6 դեպք:

Հաստատված դեպքերի ընդհանուր թիվը 78 է:

***

ԹԱՐՄԱՑՈՒՄ 18:00

Ունենք ևս 8 հաստատված դեպք, որոնցից ոմանք արդեն իսկ մեկուսացված են եղել, իսկ մյուսների շփման շրջանակը պարզվում է: Նրանցից 1-ը փոխկապակցված է «Էջմիածնի» դեպքի հետ, իսկ մյուս 7-ը՝ «արտադրամասի»:

Հանրագումարով, այս պահին ունենք հաստատված 72 դեպք, որոնցից 1-ը՝ առողջացած:

***

Մարտի 17-ին՝ ժամը 12:00-ի դրությամբ

իրականացված կորոնավիրուսային հիվանդության թեստավորման արդյունքում հաստատվել է ևս 12 դեպք, որոնցից 6–ը փոխկապակցված է Էջմիածնի դեպքի հետ, իսկ մյուս 6–ը՝ արտադրամասի: Վերջիններս ի սկզբանե եղել են մեկուսացված:

Հանրագումարով, այս պահին ունենք հաստատված 64 դեպք, որոնցից 1–ը՝ առողջացել է:

Առողջապահության նախարարությունը կրկին կոչ է անում՝

- Խուսափե՛լ շնչառական վարակներով հիվանդների հետ շփումից, անհնարինության դեպքում՝ օգտագործե՛լ անհատական պաշտպանիչ միջոցներ (դիմակներ)
- Հաճախակի լվանալ ձեռքերը՝ առնվազն 20 վայրկյան տևողությամբ, հատկապես սնունդ ընդունելուց առաջ և տուն մտնելուց հետո
- Գրիպանման երևույթների առկայության դեպքում, չզբաղվել ինքնաբուժմամբ, դիմե՛լ բժշկի:
- Հիշեցնենք, որ առողջապահության նախարարությունում գործում է շուրջօրյա «թեժ գիծ» ծառայություն՝ 8003 և «օպերատիվ զանգերի կենտրոն»՝ 060838300 հեռախոսահամարներով:

***

Մարտի 17–ի, ժամը 00:00–ի դրությամբ ունենք հաստատված 52 դեպք, որից 12–ը (միջանկյալ հետազոտություն) հաստատվել է կարանտինում գտնվող անձնաց շրջանում և չեն ունեցել ախտանշաններ:

Նշենք, որ Կորոնավիրուսային հիվանդությամբ հաստատված առաջին պացիենտը առողջացել է:

Մարտի 16–ի դրությամբ┼

Մարտի 16–ի, ժամը 22:00–ի դրությամբ Հայաստանում իրականացվել է կորոնավիրուսային հիվանդության 694 հետազոտություն, որից 45–ը՝ դրական արդյունքով: Նրանցից ոմանք արդեն իսկ մեկուսացած անձինք են, իսկ մնացածի շփման շրջանակը պարզվում է: Նորք ինֆեկցիոն հիվանդանոցում այս պահին հոսպիտալացված է 87 հիվանդ:

Ըստ Չինաստանի Առողջապահության պետական հանձնաժողովի ամենօրյա զեկույցի՝ մարտի 16–ի, ժամը 18:00 դրությամբ աշխարհում գրանցվել է 173551 հաստատված դեպք: Չինաստանից դուրս աշխարհի 153 երկրում գրանցվել է 92474 դեպք:

Մարտի 15–ի դրությամբ┼

***
ԹԱՐՄԱՑՈՒՄ 22:00, 15.03.2020թ.
Ունենք ևս 2 հաստատված դեպք, որոնք իրար հետ փոխկապակցված են: Նրանց սերտ շփման շրջանակը պարզվում է:
Հանրագումարով, այս պահին ունենք հաստատված 28 դեպք:
Նաև ունենք լավ լուր: Մեր առաջին պացիենտի երկրորդ թեստը բացասական է, այսինքն նա առողջացել է:
***
ԹԱՐՄԱՑՈՒՄ 19:30, 15.03.2020թ.
Ունենք ևս 3 հաստատված դեպք, որից 2–ը փոխկապակցված են «Էջմիածնի» դեպքի հետ և ի սկզբանե մեկուսացված են եղել:
Մյուս դեպքը արձանագրվել է Մեղրի քաղաքում՝ Իտալիայից վերջերս վերադարձած մեր քաղաքացու մոտ:
Հանրագումարով, այս պահին ունենք հաստատված 26 դեպք: Մինչ օրս կատարվել է նոր կորոնավիրուսի հայտնաբերման 577 հետազոտություն: Այս պահին մեկուսացված է 300 քաղաքացի: Նոր դեպքի հետ սերտ շփում ունեցողները հայտնաբերվում են, որպեսզի մեկուսացվեն:
***
ԹԱՐՄԱՑՈՒՄ 14:00, 15.03.2020թ.
Ավարտվեց Կորոնավիրուսային հիվանդության 52 հետազոտություն, որից 49–ը բացասական էր, իսկ 3–ը դրական: Բոլոր նոր դրական դեպքերը կապված են «Էջմիածնի» դեպքի հետ և ի սկզբանե մեկուսացված են եղել:
Մինչ այս պահն իրականացվել է 544 լաբորատոր հետազոտություն՝ 23 դրական պատասխանով:
1–ին պացիենտի կրկնակի հետազոտության

պատասխանը կլինի այսօր երեկոյան և
բացասական լինելու դեպքում, նա դուրս
կգրվի հիվանդանոցից:
21 պացիենտների առողջական վիճակը
բավարար է, այդ թվում՝ երեխայի: Մյուս 2
պացիենտի մոտ առկա է թոքաբորբ, նրանց
կյանքին նույնպես վտանգ չի սպառնում:

Մարտի 14-ի դրությամբ┼

***
ԹԱՐՄԱՑՈՒՄ 21:45, 14.03.2020թ.
Եվս 14 թեստի պատասխաններից 12-ը
բացասական են, իսկ 2-ը՝ դրական:
Վերջիններս կրկին կապված են «Էջմիածնի»
դեպքի հետ:
Այս պահին ունենք հաստատված 20 դեպք:

***
ԹԱՐՄԱՑՈՒՄ 17:00, 14.03.2020թ.
Այս պահի դրությամբ ունենք 18
հաստատված դեպք, որից 11-ը Էջմիածին
քաղաքի դեպքով, իսկ 1-ը՝ մարտի 1-ին
ախտորոշված պացիենտի կոնտակտն է:
Բոլոր նոր 3 դեպքերը եղել են մեկուսացված և
մեր հսկողության տակ:
Ունենք նաև լավ լուր. մարտի 1-ին
ախտորոշված պացիենտի այսօրվա
տեստավորումը բացասական արդյունք է
ցույց տվել, այսինքն նրա մոտ վիրուս չի
հայտնաբերվել: Վաղը ևս մեկ բացասական
արդյունք ստանալուց հետո, նա դուրս կգրվի
հիվանդանոցից:

***
Առողջապահության նախարարությունը
վերջին օրերին թե՛ բնակչությունից և թե՛
զանգվածային լրատվամիջոցների
ներկայացուցիչներից պարբերաբար
«ահազանգեր» է ստանում, որ
հանրապետության այս կամ այն տարածքից
մարդկանց են «մեկուսացնում»:
Այս կապակցությամբ հայտնում ենք, որ
կորոնավիրուսային հիվանդության վիճակով
պայմանավորված երկրում ընթանում են
համաճարակաբանական գործողություններ՝
սահմանված կարգով:
Լրատվամիջոցներին խնդրում ենք՝
«ահասարսուռ» վերնագրերով խուճապային
տրամադրություն չստեղծել, վստահել, որ
նախարարությունը պատշաճ իրականացնում
է իր լիազորությունների շրջանակներում
անհրաժեշտ աշխատանքները:
Իսկ բնակչությանը հորդորում ենք՝
պահպանել հանգստություն և հետևել
պաշտոնական լրահոսին:

***
Քիչ առաջ ավարտվել է ևս 38
հետազոտություն, որից 36-ը բացասական,
իսկ 2-ը՝ դրական: Դրական թեստով
պացիենտները համաճարակաբանորեն
կապված են Էջմիածնի դեպքի հետ և ի
սկզբանե մեկուսացված են եղել:
Այս պահին ունենք 15 հաստատված դեպք,
որից միայն մեկի մոտ առկա է թոքաբորբ:

Մարտի 13-ի դրությամբ┼

***
Կարանտինում գտնվող 31 անձանցից 28-ն
այսօր կգնան տուն, քանի որ նրանց թեստի
արդյունքները բացասական են: Նրանցից
երկուսը հոսպիտալացվում են, քանի որ
թեստի արդյունքները եղել են դրական, իսկ
մեկը կշարունակի մնալ կարանտինում:
Բացի այդ, այսօր ժամը 22:00-ի դրությամբ
հաստատվել է ևս 3 դեպք, որից երկուսը եղել
են արդեն իսկ հաստատված դեպքի
կոնտակտները, իսկ 1-ը ժամանել է
Ֆրանսիայից:
Ընդհանուր առմաբ այս պահին ունենք
կորոնավիրուսային հիվանդության
հաստատված 13 դեպք:
Բոլոր պացիենտների վիճակը բավարար է,
միայն մեկի մոտ առկա է թոքաբորբ:

***

Պայմանավորված ներկայիս իրավիճակով՝
«Նորք» ինֆեկցիոն հիվանդանոցը
վերապրոֆիլավորվել է և այսուհետ
սպասարկելու է միայն կորոնավիրուսային
հիվանդության կասկածով և հաստատված
պացիենտներին:

Բոլոր այլ ինֆեկցիոն հիվանդություններով
պայմանավորված պացիենտները
տեղափոխվել են այլ հիվանդանոցներ:

Հորդորում ենք չխոչընդոտել հիվանդանոցի

բնականոն աշխատանքը, մտածել սեփական անվտանգության մասին, հիվանդանոցի շուրջը չիրականացնել նկարահանումներ՝ հարգելով քաղաքացիների անձնական և բժշկական գաղտնիքի իրավունքը:

Նշենք, որ այս պահի դրությամբ ունենք կորոնավիրուսային հիվանդության հաստատված 8 դեպք:

***

Այս պահին Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց է տեղափոխվել 5 քաղաքացի, որոնք ունեցել են որոշակի գանգատներ:

Նրանցից վերցվել են նմուշառումներ, որպեսզի կատարվի թեստավորում:

***

Մարտի 13–ի, ժամը 14:00–ի դրությամբ Հայաստանում իրականացվել է Կորոնավիրուսային հիվանդության 292 հետազոտություն՝ 8 դրական արդյունքով, որից 2–ը հաստատվել է քիչ առաջ: Պացիենտները հոսպիտալացված են ինֆեկցիոն հիվանդանոցում: Ջերմում է միայն թոքաբորբով հիվանդը, մնացած 7–ը գանգատներ չունեն:

Վերջին 4 դեպքը փոխկապակցված է հաստատված նոր կորոնավիրուսով Էջմիածնի քաղաքացու հետ, որոնք օրեր առաջ մեկուսացվել էին:

Հավելենք, որ մարտի 1–ին կարանտինային գոտի տեղափոխված քաղաքացիների լաբորատոր հետազոտությունները պատրաստ կլինեն մինչև օրվա ավարտ:

Առողջապահության նախարարությունը կոչ է անում՝

–Խուսափե՛լ շնչառական վարակներով հիվանդների հետ շփումից, անհնարինության դեպքում՝ օգտագործե՛լ անհատական պաշտպանիչ միջոցներ (դիմակներ),

–Հաճախակի լվանալ ձեռքերը՝ առնվազն 20 վայրկյան տևողությամբ, հատկապես սնունդ ընդունելուց առաջ,

–Գրիպանման երևույթների առկայության դեպքում, չզբաղվել ինքնաբուժմամբ, դիմե՛լ բժշկի:

Մարտի 12–ի դրությամբ┼

***

Հաստատվել է Կորոնավիրուսային հիվանդության 2 նոր դեպք

Մարտի 12–ի ժամը 21:00 դրությամբ

Հաստատվել է Կորոնավիրուսային հիվանդության 2 նոր դեպք: Պացիենտները հոսպիտալացված են ինֆեկցիոն հիվանդանոցում:

Վերջիններս հաստատված նոր կորոնավիրուսով Էջմիածնի քաղաքացու հետ սերտ շփում ունեցած անձանց շրջանակից են, որոնք երեկ երեկոյան մեկուսացվել էին:

Նրանց մոտ դիտվել էր ջերմության բարձրացում, ինչի կապակցությամբ նրանք տեստավորվել են, որի արդյունքում հիվանդությունը նրանց մոտ հաստատվել էր:

Այս պահին նրանց ինքնազգացողությունը լավ է, նրանք չեն ջերմում:

Մամուլում տարածվում է, թե Նոր կորոնավիրուսով 15-ամյա երեխա է վարակվել:

Պաշտոնապես տեղեկացնում ենք, որ կորոնավիրուսով վարակված երեխայի դեպք Հայաստանում չկա:

Այս պահի դրությամբ Հայաստանում կա Կորոնավիրուսային հիվանդության հաստատված 6 դեպք:

***

Հաստատվել է Կորոնավիրուսային հիվանդության 3 նոր դեպք: Պացիենտները հոսպիտալացված են ինֆեկցիոն հիվանդանոցում:

Բոլորը Հայաստան ժամանել են Իտալիայից: Նրանցից 1-ը Իտալիայի (տարիքը՝ 51), իսկ 2-ը Հայաստանի քաղաքացիներ են (տարիքը՝ 45 և 27): Պացիենտներից երկուսն այս պահին չունեն գանգատներ: Երրորդ պացիենտը ջերմում է և ունի աջակողմյան բազալ թոքաբորբ, որի կապակցությամբ ստանում է ախտանշանային բուժում:

Հայտնաբերվել և մեկուսացվել է նրանց հետ սերտ շփման ամբողջ շրջանակը՝ 57 անձ: Նշենք, որ մինչ այդ մեկուսացված էին ևս 31 հոգի: Այս պահի դրությամբ ընդհանուր առմամբ մեկուսացված է 88 անձ:

Մինչ այս պահն իրականացվել է 262 հետազոտություն՝ 4 դրական արդյունքով:

Կորոնավիրուսային հիվանդության 3 նոր դեպքի մասին հայտարարելուց հետո համացանցում տարածվել է, թե իբր «Հետազոտության ընթացքում ևս 3 անձի մոտ է հայտնաբերվել»: Այս «ինֆորմացիան» սկսել են արտատպել նաև լրատվամիջոցները:

Հարգելի ֆեյսբուքյան օգտատերեր, կոչ ենք անում հանրության շրջանում ավելորդ խուճապ չառաջացնել և ունենալ պատասխանատվության զգացում:

Այս պահին ընդհանուր առմամբ Հայաստանում գրանցվել է կորոնավիրուսային հիվանդության 4 դեպք, որից մեկի մասին հայտարարվել է մարտի 1-ին և 3-ը՝ մարտի 11-ին:

Մարտի 11-ի դրությամբ┼

Հաստատվել է Կորոնավիրուսային հիվանդության 3 նոր դեպք: Պացիենտները հոսպիտալացված են ինֆեկցիոն հիվանդանոցում:

Բոլորը Հայաստան ժամանել են Իտալիայից: Նրանցից 1-ը Իտալիայի (տարիքը՝ 51), իսկ 2-ը Հայաստանի քաղաքացիներ են (տարիքը՝ 45 և 27): Պացիենտներից երկուսն այս պահին չունեն գանգատներ: Երրորդ պացիենտը ջերմում է և ունի աջակողմյան բազալ թոքաբորբ, որի կապակցությամբ ստանում է ախտանշանային բուժում:

Այս պահին կազմակերպվում են նրանց հետ սերտ շփումներ ունեցած անձանց մեկուսացման աշխատանքները:

Հավելենք, որ բոլորն ի սկզբանե գտնվել են Առողջապահության նախարարության

հսկողության տակ՝ ժամանելուն պես:

Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությունը հայտարարել է համավարակ՝ պայմանավորված Կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID–19):

Կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID–19) պայմանավորված համաճարակային վիճակը մարտի 9–ի ժամը 18:00–ի դրությամբ┼

Չինաստանի Առողջապահության պետական հանձնաժողովի ամենօրյա զեկույցի համաձայն՝ մարտի 9–ի ժամը 18:00–ի դրությամբ Չինաստանում արձանագրվել է կորոնավիրուսային հիվանդության (COVID–19) 80904 հաստատված դեպք, առողջացածների թիվը՝ 58807 (72.7%): Գրանցվել է 3123 մահ (3.9%): Աշխարհում գրանցվել է 111478 հաստատված դեպք: Չինաստանից դուրս աշխարհի 107 երկրում գրանցվել է 30574 դեպք:

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը փետրվարի 29–ից ռիսկը շատ բարձր է գնահատել ոչ միայն Չինաստանում, այլև տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներում:

Նշենք, որ Հայաստանի միջգերատեսչական աշխատանքային խումբն ամենօրյա ռեժիմով իրականացնում է վարակի դեմ պայքարի քննարկումներ, և խնդիրների առկայության դեպքում ներկայացնում ոլորտային առաջարկություններ՝ հաջորդիվ ապահովելով է դրանց իրականացումը:

- Մինչ օրս իրականացվել է 211 հետազոտություն՝ 1 դրական արդյունքով:
- Շարունակվում է պետական սահմանի անցման կետերում ուժեղացված հսկողությունը: Ներկայումս 14–օրյա բժշկական հսկողությունն իրականացվում է Իրանի Իսլամական Հանրապետությունից, Իտալիայից, Չինաստանից, Ճապոնիայից, Հարավային Կորեայից ժամանած ուղևորների նկատմամբ՝ անկախ քաղաքացիությունից (երկրների ցանկում ավելացվելու են Ֆրանսիան, Գերմանիան և Իսպանիան):
- Ուժի մեջ մտած Իրան–Հայաստան սահմանային հատումները սահմանափակող կառավարության որոշման համաձայն՝ Մեղրիի անցակետից եկող բոլոր բեռնատարները տեղաշարժվել են ոստիկանության ուղեկցությամբ և առողջապահության նախարարության մասնագետների պարբերաբար հսկողությամբ: 857 վարորդի (որից 228–ն՝ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի) նկատմամբ սահմանվել է հսկողություն Հայաստանի ողջ տարածքում, այդ թվում՝ Պետական եկամուտների կոմիտեի մաքսային պահեստներում, մինչև նրանց հետ վերադարձը, իսկ Հայաստանի քաղաքացի վարորդների նկատմամբ հսկողությունը սահմանվել է ըստ բնակության վայրի:
- Երևան են ժամանել Առողջապահության համաշխարհային կազմակերպության տարածաշրջանային փորձագետները, ովքեր իրականացնելու են կորոնավիրուսային հիվանդության դեմ պայքարի ուղղությամբ հոսպիտալային պատրաստվածության և լաբորատոր հետազոտությունների գնահատում:
- Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնում ձևավորվել է «Օպերատիվ զանգերի կենտրոն», հեռախոսահամարը՝ 060 83 83 00, որն աշխատում է շուրջօրյա:

Նոր կորոնավիրուսային վարակով պայմանավորված համաճարակային վիճակը 2020 թվականի մարտի 2–ի 16:00 դրությամբ┼

Չինաստանի Առողջապահության պետական հանձնաժողովի ամենօրյա զեկույցի համաձայն՝ 2020 թվականի մարտի 2–ի 16:00 դրությամբ Չինաստանում արձանագրվել է նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID–19) 80175 հաստատված դեպք, առողջացածների թիվը՝ 44607 (55.6%): Գրանցվել է 2915 մահվան դեպք (3.6%): Աշխարհում գրանցվել է 88950 հաստատված դեպք: Չինաստանից

դուրս աշխարհի 62 երկրում գրանցվել է 8776 դեպք:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) տվյալների համաձայն՝ աշխարհում մարտի 2-ի դրությամբ արձանագրվել է 87137 լաբորատոր հաստատված դեպք, որից Չինաստանում՝ 79968, 2873-ը՝ մահվան ելքով: Չինաստանից դուրս աշխարհի 58 երկրում արձանագրվել է 7169 դեպք, որից 104-ը՝ մահվան ելքով:

Հայաստանում նոր կորոնավիրուսի դեմ պայքարի աշխատանքները շարունակվում են: Արդեն իսկ իրականացվել է 120 հետազոտություն՝ մեկ դրական արդյունքով:

ԱՀԿ նոր մոտեցումների համաձայն՝ լրամշակվել են Նոր կորոնավիրուսային վարակի բուժման ալգորիթմը և դեպքերի ստանդարտ բնորոշման սահմանումները, որոնք սահմանված կարգով կհաստատվեն և կտեղայնացվեն: Հանրապետության բժշկական կազմակերպություններում նոր կորոնավիրուսային վարակի (COVID-19) դիմակայումն ապահովելու համար իրականացվում է բուժանձնակազմի պատրաստվածությանն ուղղված միջոցառումներ:

Նոր կորոնավիրուսային վարակով պայմանավորված համաճարակային վիճակը փետրվարի 27-ի ժամը 14:00 դրությամբ┼

Չինաստանի Առողջապահության պետական հանձնաժողովի ամենօրյա զեկույցի համաձայն՝ փետրվարի 27-ի ժամը 14:00 դրությամբ Չինաստանում կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) հաստատված դեպքերի թիվը կազմել է 78631, հաստատված դեպքերից առողջացածների թիվը՝ 32,654: Գրանցվել է 2747 մահ: Ըստ նույն աղբյուրի՝ փետրվարի 27-ի, ժամը 09:00-ի դրությամբ աշխարհում արձանագրվել է 82206 հաստատված դեպք: Չինաստանից դուրս աշխարհի 46 երկրում գրանցվել է 3575 դեպք:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով՝ փետրվարի 26-ի դրությամբ գլոբալ մակարդակով արձանագրվել է նոր կորոնավիրոսային վարակի (COVID-19) 81109 հաստատված դեպք: Չինաստանում արձանագրվել է 78191 դեպք, որից 2718-ը մահվան ելքով: Չինաստանից դուրս 2918 դեպք է արձանագրվել 37 երկրում, որից 43-ը մահվան ելքով:

Նոր կորոնավիրուսային վարակի (COVID-19) դեմ պայքարի համալիր միջոցառումները՝ սահմանային հսկողությունից մինչ լաբորատոր հետազոտություններ շարունակվում են: Իրականացվել է 95 հետազոտություն՝ բացասական արդյունքով:

Հանրապետության բժշկական կազմակերպություններում նոր կորոնավիրուսային վարակի (COVID-19) դիմակայումն ապահովելու համար իրականացվում են բուժանձնակազմի պատրաստվածությանն ուղղված միջոցառումներ:

Մշտական կապ է հաստատվել Առողջապահության համաշխարհային կազմակերպության և տարածաշրջանի գործընկերների հետ՝ վարակի դեմ պայքարի գործում կարողությունների քննարկման նպատակով:

Նոր կորոնավիրուսային վարակով պայմանավորված համաճարակային վիճակը փետրվարի 26-ի, ժամը 18:00 դրությամբ┼

Չինաստանի Առողջապահության պետական հանձնաժողովի ամենօրյա զեկույցի համաձայն՝ փետրվարի 26-ի ժամը 18:00 դրությամբ, նոր կորոնավիրուսային վարակով (COVID-19) հաստատված դեպքերի թիվը կազմել է 78195: Հաստատված դեպքերից առողջացածների թիվը կազմել է 30073: Գրանցվել է 2718 մահ: Նույն աղբյուրը տեղեկացնում է նաև, որ աշխարհում գրանցվել է 81226 հաստատված դեպք:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության փետրվարի 25-ի տվյալներով՝ ամբողջ աշխարհում արձանագրվել է 80239 դեպք, որից Չինաստանում՝ 77780, 2666-ը՝ մահվան ելքով: Չինաստանից դուրս 33 երկրում գրանցվել է 2459 դեպք, 34-ը մահվան ելքով:

Առողջապահության նախարարության կողմից շարունակվում են նոր կորոնավիրուսային վարակի (COVID-19) դեմ պայքարի համալիր միջոցառումները: Բժշկական կազմակերպություններն ապահովված են անհրաժեշտ բժշկական պարագաներով: Երկիր է ներկրվել նոր կորոնավիրուսային վարակի (COVID-19) ախտորոշման համար թեստերի նոր խմբաքանակ: Չնայած Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից Նոր կորոնավիրուսային վարակի (COVID-19) բուժման ուղղությամբ այսօր որևէ կոնկրետ դեղ չի առաջարկվում, նախարարության մասնագետները ուսումնասիրվել են թե Չինաստանի, թե այլ երկրների կողմից առաջարկվող փորձը, ինչի արդյունքում մշակվում է նոր կորոնավիրուսային վարակով (COVID-19) պացիենտների վարման ընթացակարգ:

Իրանից ինքնաթիռով վերադարձող ուղևորների նկատմամբ հսկողությունը պատշաճ իրականացնելու համար առողջապահության նախարար Արսեն Թորոսյանի հանձնարարությամբ ՀՀ ԱՆ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի մասնագետը մեկնել էր Թեհրան:

Թեհրան-Երևան ինքնաթիռը 52 ուղևորով, մասնագետի ուղեկցությամբ վայրէջք է կատարել «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում: Բոլորը ուղևորները թե՛ օդանավ նստելիս, թե՛ ընթացքում և՛ թե վայրէջքից հետո ջերմաչափվել են: Վերջիններիս մոտ որևէ գանգատ կամ ջերմություն չի արձանագրվել: Նրանք գտնվելու են տնային հսկողության տակ:

Նոր կորոնավիրուսային վարակով պայմանավորված համաճարակային վիճակը փետրվարի 25-ի ժամը 13:00-ի դրությամբ┼

Չինաստանի Առողջապահության պետական հանձնաժողովի ամենօրյա զեկույցի համաձայն՝ փետրվարի 25-ի, ժամը 13:00-ի դրությամբ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) հաստատված դեպքերի թիվը կազմել է 77782, կասկածելի դեպքերի թիվը՝ 2824, հաստատված դեպքերից առողջացածների թիվը՝ 27554, գրանցվել է 2666 մահ: Այս պահի դրությամբ ծանր վիճակում է գտնվում 9126 պացիենտ:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների համաձայն՝ ընդհանուր առմամբ, աշխարհում փետրվարի 24-ի դրությամբ արձանագրվել է 79331 լաբորատոր հաստատված դեպք, որից Չինաստանում՝ 77262, 2595-ը՝ մահվան ելքով: Չինաստանից դուրս աշխարհի 29 երկրում արձանագրվել է 2069 դեպք, որից 23-ը մահվան ելքով:

Վերը նշված տվյալները փաստում են, որ Չինաստանում իրավիճակի կայունացումը շարունակվում է:

Ինչ վերաբերում է Իրանի Իսլամական Հանրապետությունում արձանագրված դեպքերին, ապա պետք է նշել, որ փետրվարի 25-ի, ժամը 13:00-ի դրությամբ արձագրվել է 61 դեպք, որից 15-ը՝ մահվան ելքով:

Հայաստանում նոր կորոնավիրուսի դեմ պայքարի աշխատանքները շարունակվում են և փետրվարի 25-ի ժամը 13:00-ի դրությամբ մեր երկրում նշված վարակի հաստատված դեպք չկա:

Նոր կորոնավիրուսային վարակով պայմանավորված համաճարակային վիճակը փետրվարի 22-ի ժամը 15:30 դրությամբ┼

Չինաստանի Առողջապահության պետական հանձնաժողովի ամենօրյա զեկույցի համաձայն՝ փետրվարի 22-ի ժամը 15:30 դրությամբ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) հաստատված դեպքերի թիվը կազմել է 76392, կասկածելի դեպքերի թիվը՝ 5365, հաստատված դեպքերից առողջացածների թիվը՝ 20674 (13%), գրանցվել է 2348 մահ (3.1%): Այս պահի դրությամբ ծանր վիճակում են գտնվում 11477 պացիենտ:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների համաձայն՝ ընդհանուր առմամբ, աշխարհում փետրվարի 21-ի դրությամբ արձանագրվել է 76769 լաբորատոր հաստատված դեպք, որից Չինաստանում՝ 75569, 2239-ը՝ մահվան ելքով: Չինաստանից դուրս աշխարի 26 երկրում արձանագրվել է 1200 դեպք, որից 8-ը մահվան ելքով:

Աշխարհում արձանագրված դեպքերը 22.02.2020թ. դրությամբ

Տարածաշրջան	N	Հիվանդության արձանագրման ամսաթիվ	Երկիր	Հիվանդության հաստատված դեպքեր	Մահվան ելքով հիվանդներ
Արևմտյան խաղաղ-օվկիանոսային տարածաշրջան	1	01.12.19 (հիվանդության սկսման ամսաթիվ)	Չինաստան	76392	2348
	2	14.01.20	Ճապոնիա	110	1
			«Diamond Princess» նավ	634	2
	3	19.01.20	Կորեա	346	2
	4	23.01.20	Վիետնամ	16	0
	5	24.01.20	Սինգապուր	86	0
	6	25.01.20	Ավստրալիա	21	0
	7	25.01.20	Մալայզիա	22	0
	8	27.01.20	Կամբոջա	1	0
	9	30.01.20	Ֆիլիպիններ	3	1
Հարավարևելյան Ասիայի տարածաշրջան	10	12.01.20	Թաիլանդ	35	0

Եվրոպայի տարածաշրջան	11	24.01.20	Նեպալ	1	0
	12	27.01.20	Շրի Լանկա	1	0
	13	30.01.20	Հնդկաստան	3	0
	14	25.01.20	Ֆրանսիա	12	1
	15	28.01.20	Գերմանիա	16	0
	16	29.01.20	Ֆինլանդիա	1	0
	17	30.01.20	Իտալիա	21	1
	18	31.01.20	Մեծ Բրիտանիա	9	0
	19	31.01.20	Իսպանիա	2	0
	20	31.01.20	Ռուսաստան	2	0
	21	31.01.20	Շվեդիա	1	0
	22	04.02.20	Բելգիա	1	0
Ամերիկայի տարածաշրջան	23	21.01.20	ԱՄՆ	35	0
	24	26.01.20	Կանադա	9	0
Արևելյան Միջերկրածովյան տարածաշրջան	25	30.01.20	ԱՄԷ	11	0
	26	14.02.2020	Եգիպտոս	1	0
	27	19.02.2020	Իրան	28	5
	Ընդամենը			77810	2360

Վերը նշված տվյալները փաստում են այն մասին, որ Չինաստանում արդեն իսկ դիտվում է նոր կորոնավիրուսային վարակով պայմանավորված իրավիճակի կայունացում:

Ինչ վերաբերում է Իրանի Իսլամական Հանրապետությունում արձանագրված դեպքերին, ապա պետք է նշել, որ փետրվարի 22-ի ժամը 16:00 դրությամբ արձագրվել է 28 դեպք, որից 5-ը՝ մահվան ելքով:

Մամուլում տեղեկություն է տարածվել, թե Վրաստանի ինֆեկցիոն հիվանդանոցում Իրանի քաղաքացիներ են հոսպիտալացվել՝ կորոնավիրուսի կասկածանքով: Առողջապահության նախարարությունը կապ է հաստատել վրացի գործընկերների հետ և վերջիններիս կողմից այն հերքվել է:

Նոր կորոնավիրուսային վարակով պայմանավորված համաճարակային վիճակը փետրվարի 21-ի ժամը 16:00 դրությամբ┼

Չինաստանի Առողջապահության պետական հանձնաժողովի ամենօրյա զեկույցի համաձայն՝ փետրվարի 21-ի, ժամը 16:00 դրությամբ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) հաստատված դեպքերի թիվը կազմել է 75567, կասկածելի դեպքերի թիվը՝ 5206, հաստատված դեպքերից առողջացածների թիվը՝ 18654 (24,2%), գրանցվել է 2239 մահ (3%): Այս պահի դրությամբ ծանր վիճակում են գտնվում 11633 պացիենտ:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների համաձայն՝ ընդհանուր առմամբ, աշխարհում փետրվարի 20-ի դրությամբ արձանագրվել է 75748 լաբորատոր հաստատված դեպք: ՉԺՀ-ից դուրս աշխարի 26 երկրում արձանագրվել է 1073 դեպք:

Ըստ մասնագետների՝ 80.9% դեպքերում հիվանդությունն ընթանում է թեթև ձևով: Բարձր ռիսկային խմբում են գտնվում ծերերը և այլ զուգակցող հիվանդություններով անձինք: Հիվանդությունը ծանր ձևով ընթանում է սրտանոթային, շաքարային դիաբետով, շնչառական խանգարումներով հիվանդների մոտ:

Այսօրվա դրությամբ վարակի (COVID-19) մահացությունը հասել է 2.3%: Ընդ որում տղամարդկանց շրջանում մահացության ցուցանիշն ավելի բարձր է (տղամարդ՝ 2.8, կին՝ 1.7):

Հիվանդի տարիքից կախված բարձրանում է մահացության ցուցանիշը: Մինչև 39 տարեկան տարիքային խմբում այն կազմում է 0,2%, 40 տարեկաների մոտ՝ 0,4%, 50տ.՝ 1,3%, 60տ.՝ 3,6%, 70տ. 8%, 80տ. և բարձր՝ 14,8%: Մինչև 9 տարեկան երեխաների մոտ դեռևս մահվան ելքով դեպք չի գրանցվել՝ չնայած հիվանդանոցներում բուժում են ստանում մանկահասակ տարիքի երեխաներ:

Հարկ է նշել, որ ռիսկի խմբի մեջ են մտել նաև բուժաշխատողները՝ 3019 հիվանդ, որից 5-ը մահվան ելքով:

Աշխարհում արձանագրված դեպքերը՝ 21.02.2020. դրությամբ

	N	Հիվանդության արձանագրման ամսաթիվ	Երկիր	Հիվանդության հաստատված դեպքերի քանա (+ նախորդ օրվ
Արևմտյան խաղաղ—օվկիանոսային տարածաշրջան	1	01.12.19 (հիվանդության սկսման ամսաթիվ)	Չինաստան	75567 (892)
	2	14.01.20	Ճապոնիա	97 (12)
			«Diamond Princess» նավ	634 (13)
	3	19.01.20	Կորեա	156 (74)
	4	23.01.20	Վիետնամ	16
	5	24.01.20	Սինգապուր	85 (1)
	6	25.01.20	Ավստրալիա	17 (2)
	7	25.01.20	Մալայզիա	22
	8	27.01.20	Կամբոջա	1
	9	30.01.20	Ֆիլիպիններ	3
Հարավարևելյան Ասիայի տարածաշրջան	10	12.01.20	Թաիլանդ	35
	11	24.01.20	Նեպալ	1
	12	27.01.20	Շրի Լանկա	1
	13	30.01.20	Հնդկաստան	3
Եվրոպայի տարածաշրջան	14	25.01.20	Ֆրանսիա	12
	15	28.01.20	Գերմանիա	16
	16	29.01.20	Ֆինլանդիա	1
	17	30.01.20	Իտալիա	4
	18	31.01.20	Մեծ Բրիտանիա	9
	19	31.01.20	Իսպանիա	2
	20	31.01.20	Ռուսաստան	2

	21	31.01.20	Շվեդիա	1
	22	04.02.20	Բելգիա	1
Ամերիկայի տարածաշրջան	23	21.01.20	ԱՄՆ	16 (1)
	24	26.01.20	Կանադա	9 (1)
Արևելյան Միջերկրածովյան տարածաշրջան	25	30.01.20	ԱՄԷ	9
	26	14.02.2020	Եգիպտոս	1
	27	19.02.2020	Իրան	2
	Ընդամենը			76723 (1000)

Ինչ վերաբերում է Իրանի Իսլամական Հանրապետությունում (ԻԻՀ) արձանագրված դեպքերին, ապա պետք է նշել, որ առողջապահության նախարարությունը շարունակում է աշխատանքները ԻԻՀ-ում թե՛ հայկական դեսպանատան, և թե՛ առողջապահության նախարարության հետ: Արդյունքում պարզվել է, որ փետրվարի 21-ի ժամը 16:00 դրությամբ արձագրվել է 18 դեպք, որից 4-ը՝ մահվան ելքով:

Գանձապետական հաշիվ: Միջազգային փոխանցում

Հաստատված դեպքերն ըստ օրերի

Առկա իրավիճակ

Բնակչության իրազեկում

Հաճախ հնչող հարցեր

Մամուլի հրապարակումներ

Տեխնիկական փաստաթղթեր